

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԸ  
«ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ ՍՏԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԻ» ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Գրանցված է»*  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
14 հուլիսի 2012 թ.  
Պետական գրանցման թիվ 12412278

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

26 հունիսի 2012 թ.  
ք. Երևան

N 197-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

«ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ ՍՏԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ  
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԻ» ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը.  
(*նախարանք փոփ. 02.12.14 N 858-Ն*)

*Հրամայում եմ՝*

1. Հաստատել «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական

տվյալների գրանցման հայտի» ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար**

**Ա. Ալավերդյան**

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների կոմիտեի  
2012թ. հունիսի 26-ի  
N 197-Ն հրամանի

Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի ձև	Փաստաթղթի մուտքագրման համար  <i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i>										
1 Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	2 Հարկ վճարողի (գործատուի) անվանում (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անուն, ազգանուն)										
<table border="1" style="width: 100%; height: 40px;"> <tr> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> <td style="width: 10%;"></td> </tr> </table>											Հայտի ներկայացման ամսաթիվ

1) «Փաստաթղթի մուտքագրման համար» մասում նշվում է գործատուի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, նոտար) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, [1] տողում ինքնաշխատ լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը, [2] տողում («Հարկ վճարողի (գործատուի) անվանում») տողում ինքնաշխատ լրացվում է կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը)

**Բաժին I. Անձնավորված տեղեկություններ**

Հ/Հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀՕՀ)	Ծննդյան ամսաթիվ	Անձը հաստատող փաստաթուղթ	
						տեսակ	սերիա և համար
1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6	1.7	1.8

- 2) 1.1 դաշտում ինքնաշխատ լրացվում է աշխատողի հերթական համարը
- 3) 1.2 – 1.4 սյունակներում լրացվում են աշխատող ֆիզիկական անձի՝ անունը, ազգանունը և հայրանունը (առկայության դեպքում)
- 4) 1.5 սյունակում լրացվում է անձի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը
- 5) 1.6 սյունակում լրացվում է ծննդյան ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին
- 6) 1.7 և 1.8 սյունակներում համապատասխանաբար լրացվում են ՀՀ-ում անձը հաստատող փաստաթղթի տեսակներից որևէ մեկը՝ ՀՀ քաղաքացիների համար ՀՀ անձնագիր, նույնականացման քարտ, մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայական, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ ՀՀ-ում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ, ՌԴ քաղաքացու անձնագիր), փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ և անձը հաստատող համապատասխան փաստաթղթի սերիան և համարը

**Բաժին II. Կոնտակտային տվյալներ**

Հեռախոսահամար	Բջջային հեռախոսահամար	Էլ. փոստ
2.1	2.2	2.3

- 7) 2.1 պունակում լրացվում է ֆիզիկական անձի տան (քաղաքային) հեռախոսահամարը (առկայության դեպքում)
- 8) 2.2 պունակում լրացվում է ֆիզիկական անձի բջջային հեռախոսահամարը (առկայության դեպքում)
- 9) 2.3 պունակում լրացվում է ֆիզիկական անձի էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)

**Բաժին III. Հասցե և բնակության տվյալներ**

**Ենթաբաժին I. Հայաստանի Հանրապետությունում բնակության հասցե**

Մարզ	Համայնք	Բնակավայր	Փողոց	Շենք/տուն	Բնակարան
3.1.1	3.1.2	3.1.3	3.1.4	3.1.5	3.1.6

- 10) 3.1.1 պունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության մարզի անվանումը
- 11) 3.1.2 պունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության համայնքի անվանումը
- 12) 3.1.3 պունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակավայրի անվանումը
- 13) 3.1.4 պունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի փողոցի անվանումը
- 14) 3.1.5 պունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի շենքի կամ տան համարը
- 15) 3.1.6 պունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի բնակարանի համարը

**Ենթաբաժին II. Արտերկրի բնակության հասցե**

Երկիր	Հասցեատող 1	Հասցեատող 2	Հասցեատող 3	Փոստի համար
3.2.1	3.2.2	3.2.3	3.2.4	3.2.5

- 16) 3.2.1 պունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության երկիրը (պետությունը)
- 17) 3.2.2 պունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության առաջին հասցեատողը
- 18) 3.2.3 պունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության երկրորդ հասցեատողը
- 19) 3.2.4 պունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության երրորդ հասցեատողը
- 20) 3.2.5 պունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության վայրի փոստային համարը

**Բաժին IV. Աշխատանքի մասին տեղեկություններ**

**Ենթաբաժին I. Աշխատանքային հարաբերություններ**

Աշխատանքային հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
4.1.1	4.1.2

Պաշտոն		
Կոդ	Սկիզբ	Ավարտ
4.1.3	4.1.4	4.1.5

- 21) 4.1.1 պունակում լրացվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատողի աշխատանքի անցնելու ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին
- 22) 4.1.2 պունակում լրացվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին
- 23) 4.1.3, 4.1.4 և 4.1.5 պունակներում լրացվում է աշխատողի պաշտոնի (մասնագիտության) կոդը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 872-Ն հրամանի («Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգիչ») համաձայն, ինչպես նաև տվյալ պաշտոնի (մասնագիտությամբ աշխատանքի անցնելու) նշանակման և տվյալ պաշտոնից ազատվելու (մասնագիտության փոփոխության) ամսաթիվը (օրը, ամիսը, տարին): Եթե ֆիզիկական անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված չէ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա հաստիքային զինծառայողի դեպքում լրացվում է համակարգում զինծառայողի և դրան հավասարեցված անձի պաշտոնին տրված կոդը և ծառայության անցնելու ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին:  
**(23-րդ կետը խմբ. 14.04.15 N 218-Ն)**

**Ենթաբաժին I.I. Մասնագիտություն(ներ)**

Կոդ (ծածկագիր)
4.1.1.1

- 24) 4.1.1.1 պունակում լրացվում է աշխատողի մասնագիտության կոդը (ծածկագիրը) ըստ մասնագիտական կրթության՝ ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն և ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն (2015 թվականի նոյեմբերի 1-ից՝ ՀՀ կառավարության 23.10.2014 թվականի N 1191-Ն) որոշումներով հաստատված ցանկերի («Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների» և «Բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների») («Բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների») համաձայն: Եթե ֆիզիկական անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված չէ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա հաստիքային զինծառայողի դեպքում լրացվում է համակարգում զինծառայողի և դրան հավասարեցված անձի մասնագիտությանը տրված կոդը (ծածկագիրը):  
**(Ենթաբաժինը լրաց. 14.04.15 N 218-Ն, խմբ. 19.06.15 N 418-Ն)**

**Ենթաբաժին II. Չվճարվող արձակուրդի մասին տեղեկություններ**

Չվճարվող արձակուրդ		Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ		Երեխայի ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
Սկիզբ	Ավարտ	Սկիզբ	Ավարտ	
4.2.1	4.2.2	4.2.3	4.2.4	4.2.5


- 25) 4.2.1 և 4.2.2 պունակներում լրացվում են գործատուի կողմից վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ տրամադրելու սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի
- 26) 4.2.3 և 4.2.4 պունակներում լրացվում են գործատուի կողմից վարձու աշխատողին մինչև 3 տարեկան երեխայի ինսանքի արձակուրդ տրամադրելու սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի
- 27) 4.2.5 պունակում լրացվում է երեխայի ծննդյան ամսաթիվը՝ օր, ամիս, տարի  
(*Ենթաբաժինը խմբ. 14.04.15 N 218-Ն*)

**Ենթաբաժին III. Քաղաքացիաիրավական հարաբերություններ**

Քաղաքացիաիրավական հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
4.3.1	4.3.2

- 28) 4.3.1 պունակում լրացվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին
- 29) 4.3.2 պունակում լրացվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի դադարեցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

**Ենթաբաժին IV. Սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու մասին տեղեկություն**

Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվ (օր/ամիս/տարի)
4.4.1

- 30) 4.4.1 պունակում լրացվում է կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին  
(*բաժինը խմբ., լրաց. 14.04.15 N 218-Ն, խմբ. 19.06.15 N 418-Ն*)

**Բաժին V. Աշխատանքի մասին նախկինում սխալ հանձնված տեղեկություններ**

**Ենթաբաժին I. Աշխատանքային հարաբերություններ**

Աշխատանքային հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
5.1.1	5.1.2

- 31) 5.1.1 պունակում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի

կնքման կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի ընդունման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

32) 5.1.2 պունակում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

Պաշտոն		
Կոդ	Սկիզբ	Ավարտ
5.1.3	5.1.4	5.1.5

33) 5.1.3, 5.1.4 և 5.1.5 պունակներում արտացոլվում են նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված աշխատողի պաշտոնի (մասնագիտության) տվյալները

**Ենթաբաժին I.I. Մասնագիտություն(ներ)**

Կոդ (ծածկագիր)
5.1.1.1

34) 5.1.1.1 պունակում արտացոլվում են նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված աշխատողի մասնագիտության տվյալները:

(*Ենթաբաժինը լրաց. 14.04.15 N 218-Ն*)

**Ենթաբաժին II. Չվճարվող արձակուրդի մասին տեղեկություններ**

Չվճարվող արձակուրդ		Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ		Երեխայի ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
Սկիզբ	Ավարտ	Սկիզբ	Ավարտ	
5.2.1	5.2.2	5.2.3	5.2.4	5.2.5

35) 5.2.1 և 5.2.2 պունակներում արտացոլվում են գործատուի կողմից վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ տրամադրելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված սկզբի և ավարտի ամսաթիվերը՝ օր, ամիս, տարի

36) 5.2.3 և 5.2.4 պունակներում արտացոլվում են գործատուի կողմից վարձու աշխատողին մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված սկզբի և ավարտի ամսաթիվերը՝ օր, ամիս, տարի

37) 5.2.5 պունակում արտացոլվում է երեխայի ծննդյան՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

(*Ենթաբաժինը խմբ. 14.04.15 N 218-Ն*)

**Ենթաբաժին III. Քաղաքացիաիրավական հարաբերություններ**

Քաղաքացիաիրավական հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
5.3.1	5.3.2

38) 5.3.1 պունակում արտացոլվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

39) 5.3.2 պունակում արտացոլվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի դադարեցման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

**Ենթաբաժին IV. Սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու մասին տեղեկություն**

<b>Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվ (օր/ամիս/տարի)</b>
5.4.1

40) 5.4.1 պունակում արտացոլվում է կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից սոցիալական վճարի կատարումը դադարեցնելու մասին գործատուին դիմելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

41) Հարկային գործակալի (գործատուի) պատասխանատու անձի (անձանց) ստորագրություն(ներ)
---

*(բաժինը լրաց., խմբ. 14.04.15 N 218-Ն)*

*(հավելվածը խմբ. 17.06.13 N 266-Ն, 02.12.14 N 858-Ն, խմբ., լրաց. 14.04.15 N 218-Ն, խմբ. 19.06.15 N 418-Ն)*